րի դռները և փախչում: Իսկ մահմեդականները առնելով նրանց տանում էին իրենց մոտ և նրանց մահմեդական էին դարձնում:

Բարեկամների սերն ու գութը վերացավ, ողորմություններ, տուրուառեր, խնամքներ վերացան, բարեկամներն ու սիրելիները օտարացան միմյանցից: Այսպես ամենքը տառապում էին: Սովը մի տարի տևեց: Երկու տարի հետո աստվածասաստ բարկությունը իջավ Զմյուռնիայի վրա, քանզի Աստված բարկությամբ նայեց իր արարածներին, ուժեղ և ահավոր երկրաշարժ եղավ. փլվեցին բոլոր գեղեցիկ կառույցները, եկեղեցիները, պանդոկները, մզկիթները, մինարեները կործանվեցին. ծովը կաթսայի նման եռում էր, շատ նավեր միմյանց ընդհարվեցին ու խորտակվեցին, իսկ այն նավերը, որ գտնվում էին այնտեղ (երկրաշարժի տեղում), ջրասույզ եղան:

Շատերը մնացին հողի տակ, չկարողացան հանել, նրանց տները դարձան իրենց գերեզմանները ըստ մարգարեի*: Նույն օրը կրկին Աստծու բարկությունը հասավ նրանց, քանզի կրակ ընկավ և այրեց մնացածներին, որոնք երկրաշարժից (ազատվել էին), կրկին պատժվեցին. նրանց նկատմամբ ասվածը կատարյալ եղավ՝ այսինքն կարկուտից մնացածը կուտի մորեխը: Դրանք կատարվեցին Զմյուռնիայի վերաբերությամբ, որովհետև նախ եկավ մորեխը, ապա սովը, հետո երկրաշարժը, ապա կրակը:

Բայց երկրաշարժից քանդված եկեղեցիները գեղեցիկ ու հարմար շինեցին նորից: Քանզի արևելքից եկած վաճառականները հայտնեցին օսմանցիների թագավորին (եկեղեցիների կործանման մասին): Եվ նրանք պատճառ դարձան ոչ միայն հայոց, այլև հույների, ֆռանկների և բոլոր քրիստոնյաների (եկեղեցիների կառուցման), որոնք ապրում էին Զմյուռնիայում:

ԳԼՈՒԽ ԾԷ
ՀՐԵԱՆԵՐԻ ՀԻՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թեսաղոնիկե քաղաքում, որ այժմ կոչվում է Սելանիկ, շատ հրեաներ են բնակվում: Ասում են, թե այստեղ պահում են կույս աղջիկներ իրենց մեսիայի գալստյան համար: (Հրեաները) ճոխ են, հարուստ, ընչավետ ու մեծատուն: Բայց գոռոզացան և դարձան չքավոր: Իրենց կորստյան փուչ խորհուրդը արին: Նրանք հավաքվեցին մի վայրում, կանչեցին իրենց կրոնի գլխավորին, որ կոչվում է խախամ, այսինքն՝ քահանայապետ, և ասացին. «Մեզ վրա թագավոր օծիր նրան, ում որ դու հավանում ես»: Նա ընտրեց Սողոն անունով մեկին՝ իմաստուն, ճարտարախոս և իրենց օրենքներին գիտակ, նաև տեսքով գեղեցիկ էր ու բարձրահասակ: Նրան օծեցին ու անվանեցն Մալեքիմ Սողոն, որ նշանակում է Սողոմոն թագավոր: Նրան հագցրին սպիտակ ու թանկագին պատմուճան և գլխին դրին եռաստեղն, կարմիր, կանաչ թագ, նրան բազմեցրին բարձր գահի վրա և նրա ձեռքը տվին ոսկեզօծ գավազան, մեջքը ոսկեպատյան թուր կապեցին, իսկ իրենք ընկան գետնին երկրպագեցին:

Նշանակեցին տասներկու դատավորներ ըստ իրենց տասներկու ցեղերի, ընտրեցին բյուրապետեր, հազարապետեր, հարյուրապետեր, հիսնապետեր, տասնապետեր, զորագլուխներ և բազմաթիվ զորքեր: Նաև գրեցին բոլոր երկրներ, որտեղ որ կան հրեաներ հետևյալ պատճենով. «Լսեք հրեաների ամբողջ ազգ, որ ընդունում եք Մովսեսի օրենքները, ահա Աստծու շնորհներով մենք թագավորեցինք այստեղ, կամենում ենք մահմեդականներին ոչնչացնել և քրիստոնյաներին հարկատու անել. հայերից՝ տասը ոսկի, հույներից՝ ութ: Դուք պատրաստ գտնվեք մահմեդականների ավագ տոնին, որը կոչում են Ղասում գունի, նրանք բոլորը շտապում են մզկիթ՝ իրենց գիշերապաշտոնին: Դուք զինավառ հարձակվեք նրանց վրա, կոտորեք նրանց և նրանց մանուկներին ու կանանց ստրկացրեք: Երբ այս ամենը կանեք, ապա կլինեք մի անձ ու մի խորհուրդ, գառներն ու գայլերը միասին կճարակեն: Այն ժամանակ մեսիան կգա և կբնակվի մեզ մոտ»:

Նամակը ուղարկեցին ամեն տեղ սուրհանդակների միջոցով, մինչև իսկ Սպահան գրեցին:

Ապա (Սողոն) օսմանցիների բոլոր քաղաքները բաժանեց իր իշխանների վրա, իսկ ինքը իրեն արքունի վայր վերցրեց Բյուզանդիան*: Բրուսա, որ Բուրսան է, տվեց Օվսե անունով մեկին, իսկ Աղրիանապոլիսը, որ Անտրանան է, մի իշխանի: Այստեղ հայտնի

*Երեմիա, ԺԹ-10-12:

*Բյուզանդիան Պոլիսն է: